


սեղմուին միայն եւ միմիայն ուսանողութեան նեղ շրջանակին մէջ, պատ-
 ճառ մը չկայ որ անյաջողութեան մատնուի: Ուսանողաց Միութեան
 ծրագիրը սահմանափակ ըլլալու է, (մանաւանդ Բարիզի մէջ): Հոն ար-
 տաքին խնդիրներ ու անձեր սպրդելու չեն. ու այն ատեն — ես գոնէ
 ա՛յն հաւատքն ունիմ — ապահովուած կրնանք նկատել անոր յարատե-
 ւութիւնը: Ու երբ Բարիզի Ուսանողաց Միութիւնն ալ աջակցի Եւրո-
 պայի Հայ Ուսանողական Միութեան, ընդհանուր վիճակագրութեան
 պատրաստութիւնն այլ եւս չի կրնար հանդիպիլ ո՛ր եւ է խոչնդոտի:

Այդ վիճակագրութեան մանրամասնութեան մէջ չպիտի մտնեմ հոս.
 այդ հոգը կը թողում զայն սրտորաստել յանձն առնող Միութեան,
 սպասելով որ ամեն տարի լոյս տեսնէ անի՝ ըստ կարելւոյն՝ կատարեալ
 կերպով:



Կրնա՞նք ունենալ այսուհետեւ ամեն տարի մեր պատուական հա-
 մալսարանին տարեկան հարցաքննութեան վիճակացոյցը, — տեղեկագիրը,
 եթէ կուզէք, — որով միայն պիտի կարենանք ունենալ որոշ ու ճշգրիտ
 գաղափար մը մեր ուսանողութեան վրայ:

Յ. Ա. ԶԳԱՊԵՏԵԱՆ



19րդ ՊԱՐԻ ՆՅԱՆԱԿՈՐ ԳԻՒՏԵՐԸ



Վ. Ի Մ Ա. Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

1. — Վիմագրութեան գիւտը նուազ օգուտ չէ տուել տպագրական
 գործին եւ գրականութեան. տպագրական մամուլը՝ Գուտէնբէրգի գիւ-
 տը՝ թէեւ մտաւորական զարգացման ամենագլխաւոր ազգակներէից մինն
 եղաւ, բայց դարձեալ վիմագրութիւնն ունի իր կարեւոր տեղը. նա
 կարողանում է անել այն, ինչ որ տակաւին չէ անում Գուտէնբէրգի
 մամուլը:

Ահա այս պատճառով 19րդ դարի գիւտերի շարքում նշանաւոր տեղ
 է բռնում նաեւ վիմագրութիւնը:

Ներկայումս գործադրած վիմագրութեան առաջին գաղափարը յը-
 դացողը եղել է 1796 թուին բաւիերացի Senefelder, թէեւ նրանից առաջ
 քարի վրայ թթուների միջոցով գծագրում էին. մի այս տեսակ ճար-

տարարուեստի մասին Ֆրանսիացի բնագէտ Dufay 1728 թւին մի կատարեալ փորձ ծանօթացրած է : Բայց 1802 թւականին է , որ Ֆրէդէրիկ Անգրէ ընկերացած Սէնէֆէլդէրի հետ վիմագրութիւնը Ֆրանսայում մտցրեց . եւ 1814 թւականներին Պարիզում de Lasteyrieի եւ Միւլհաուզում Engelmannի կողմից եղած ջանքերի շնորհիւ այդ արհեստը զարգացաւ եւ բնդհանրացաւ :

Վիմագրական արհեստին մէջ բազմաթիւ կատարելագործութիւններ մտցրին Engelmann , Motte , Bry , Lemercier , Chevalier , Langlume , Jobard , եւ այլն : Թղթի գոյները բարեփոխելով եւ զանազան գոյնի մեղաններով վիմագրելով , յաջողեցան նկարներին տալ գրեթէ մի ջրաներկ պատկերի նմանութիւնը : Ճարտար նկարողներ , որպիսիք են , Mouilleron , E. Nauteuil , A. Lecomte , Soulange , Teissier , Raffet , եւ այլք , քարի վրայ կարողացել են գծագրել թէ վարպետների գործերին օրինակները եւ թէ ինքնատիպ նկարներ՝ պատմական նիւթեր , գիւղանկարներ , ծովանկարներ , զարդանկարներ , եւ այլն :

Վիմագրութիւնը այն արհեստն է , որ վիսնագրակաւ քար կոչուած մի կրաքարի վրայ իւղային նիւթով գծուած գրութիւնները եւ նկարները ապելով է հանում : Սրա համար գործ է ածւում նուրբ եւ միօրինակ ծեփ (խմոր , pâte) եւ լաւ յղկւած մի քար , որի երկու կողմերն էլ կատարելապէս հարթահաւասարած են . այս երկու երեսներից մին անտաշ է , իսկ միւսը չեչաքարով խնամով յղկւած :

Իւղոտ մատիտով եւ կամ հեղուկ եւ ջրախառն իւղոտ մի մեղանի մէջ թաթախուած պողպատեայ գրիչով , յղկւած երեսի վրայ գրում են , յետոյ գրւածքին կամ նկարին տալիս են հաստատուն դիրք , մի քիչ բորակաթթու (acide nitrique) կամ խլորաթթու (acide chlorhydrique) աւելացրած խէժաջրով (eau gommeuse) լուարով : Այս լուացքը նպաստում է նկարին անլուծելի դառնալուն , քարի չը գծագրւած մասի մէջ թափանցելով իւղային նիւթը հեշտութեամբ բռնելու եւ իւրացնելու անընդունակ դառնալուն , եւ ընդհակառակը , ջուր բռնելու ընդունակ մի վիճակ ընդունելուն : Այնպէս որ քարի վրայ գծագրւած մասերը մընում են հաստատուն , իսկ չը գծագրւած մասերը իւղոտ նիւթը ծծելու անընդունակ են դառնում :

Տպելու համար քարը զեռեղում են սայլ կոչւած մի տեսակ սնտուկի մէջ , որտեղ անշարժ եւ հաստատ է մնում : Մաքուր ջրով թրջում են եւ յետոյ բեւեկնի հիւթով (essence de térébenthine) իւղոտ մեղանով գրւածքը հանում են : Նորից քարին ամբողջ երեսը մի նուրբ սպունգով շատ թեթեւ կերպով թրջում են եւ իսկոյն մեղանատու գլանով տպագրական մեղանը նրա վրայ տարածում են . այս մեղանը միայն իւղոտ մեղանով գծուած դիժերի վրայ կպչում է , իսկ խոնաւ մասի վրայ բնաւ չէ կպչում : Քարի երեսը ծածկում են մի քիչ խոնաւացրած սպիտակ թղթի

թերթիկով • այս թերթն էլ ծածկում են մրոսած (maculature) կոչւած մի ուրիշ թերթով , եւ դնում են հաստ եւ լաւ պրկւած կաշուց կազմըւած երկաթի շրջանակի վրայ • վերջապէս այս կերպ պատրաստւած քարը ուղղահայեաց կերպով շարժող մի գլանի տակ ճնշման են ենթարկում :

Վիմագրութեան հասարակ եղանակով կարելի է տպել զանազան գոյներով պատկերներ • այս տեսակ վիմագրութիւնը գունալիւնագրութիւն (chromolithographie) է կոչւում :

Գունաւոր վիմագրութիւնը նախապէս գործածւած է աշխարհագրական գունաւոր քարտէսներ պատրաստելու եւ յետոյ ջրաներկ պատկերներից ընդօրինակելու համար : Այս միջոցով կարելի եղած է կատարեալ ճշգրութեամբ վերատպել ձեռագիրների , միջին դարի ապակեայների եւ նոյնիսկ երեւելի նկարիչների պատկերների մանրանկարները (miniature) : Այս միջոցը գործադրւում է նաեւ յախճապակիները զարդանկարելու համար :

Գունաւոր վիմագրութեան կատարելագործման նպաստած են Kellervoven, Regamey, Daty, Rowney, Engelmann :

Գունաւոր վիմագրութեամբ տպելու համար , քարի վրայ նկարը դժելուց յետոյ , այնքան փորձեր են առնում , որքան տպագրւելու գործին հարկաւոր է գոյներ • խսկոյն այս փորձերից իւրաքանչիւրը փոխադրում են տարբեր քարերի վրայ , յետոյ գոյները այն կերպով են տեղաւորում , որ փափաքելի տեղերում ճշգրտապէս տպւեն :

Գունավիմագրութիւնը չը պէտք է շփոթել գունատպագրութեան (typographie en couleur) հետ , որը թէեւ միեւնոյն արդիւնքը տալիս է , սակայն այդ բանի համար գործ է դրւում տպագրական սովորական եղանակները :

Վիմագրութեան միջոցով կարելի է լուսանկարների օրինակները բազմացնել առանց արծաթի աղեր գործածելու : Այս շուսալիւնագրութեան (photo lithographie) համար հարկաւոր է ածուխով պատրաստւած մի լուսանկար ունենալ , որը հետեւեալ կերպով են պատրաստում : Քրօմիքի թթուով (acide chromique) խառն ժէլատինի մէջ թաթախւած թուղթը նէգատիվի հետ միասին լոյսի ազդեցութեան են ենթարկում , լոյսի ներս թափանցած մասերի ժէլատին քրօմիքը անլուծելի է դառնում : Յետոյ եթէ լուան եւ այսպէս պատրաստւած թղթի վրայ նրբացրած (porphyrisée) ածխափոշի ցանեն , այս փոշին միայն անլուծելի դարձած ժէլատինի վրայ է կպչում : Ահա այս կերպով կունենանք անայլայլելի մի պօզիտիվ պատկեր , 'ի հարկին վիմագրութեան միջոցով բազմաթիւ օրինակներ առնելու պատրաստ վիճակում :